ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Ռազմական ոստիկանության համագործակցությունն իրավապահ մարմինների հետ

Ռազմական ոստիկանությունն իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում՝

1) գրավոր հարցման դեպքում իրավապահ մարմիններին տրամադրում է հետաքրքրող տեղեկատվություն.

2) աջակցում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և դատավարական գործողությունների անցկացմանը, իր իրավասությանը հանձնված գործերով պահպանում է դեպքի վայրը, որի կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, զինծառայողների նկատմամբ կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման, նախականխման, խափանման, հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների իրականացմանը.

3) իրավապահ մարմիններին տեղեկացնում է ռազմական ոստիկանության կողմից բացահայտված պետության, հասարակության կամ քաղաքացիների անվտանգությանն սպառնացող վտանգի մասին: